

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արարատի համայնքապետարանը 2022թ.նոյեմբերի 24-ին ժամը 11:00-ին հայտարարում է Արարատ համայնքի վարչական տարածքի քաղաք Արարատ բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության խոտհարքի 0.04672 հա մակերեսով /ծածկագիր 03-002-0039-0187/ աճուրդ վաճառք:

Հողատարածքի օտարման մեկնարկային գին է սահմանվել 100 ՀՀ դրամ 1 քմ-ի համար, նախավճար՝ մեկնարկային գնի 50%ի չափով, մասնակցության վճար՝ 5000 ՀՀ դրամ, աճուրդային քայլի չափը մեկնարկային գնի 5%-ի չափով:

Աճուրդին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հայտ, մասնակցության վճարի անդորրագիր և անձնագրի պատճեն: Աճուրդի պայմաններին ծանոթանալու և լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Արարատի համայնքապետարան՝ Արարատի մարզ, Արարատ համայնք ք. Արարատ, Եսեռուկյան փ. 34: Հայտերի ընդունումը դադարեցվում է մրցույթի անցկացման օրվանից 3 /երեք/ աշխատանքային օր առաջ:

Արարատի համայնքապետարան /հեռ. 060 88 55 55 /

